



GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111 • Fax: 818-548-9041

Մարտի 12, 2020թ.

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի սիրելի աշակերտներ, անձնակազմ, ընտանիքներ և համայնք՝

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ձեզանից յուրաքանչյուրին ձեր համբերատարության և համագործակցության համար, երբ մենք վերահսկում ենք յուրօրինակ և տարածվող COVID-19 (Novel Coronavirus) վարակի իրավիճակը:

Անցյալ գիշեր նահանգապետ Գավին Նյուսոմը և Կալիֆոռնիայի առողջապահության ոլորտի պաշտոնյաները թարմացրեցին հավաքների վերաբերյալ քաղաքականությունը, որպեսզի պաշտպանենք հանրության առողջությունն ու դանդաղեցնենք COVID-19 վարակի տարածումը: Հրահանգը հետևյալն է՝

Նահանգի հանրային առողջապահության ոլորտի մասնագետները որոշել են, որ ամբողջ նահանգի տարածքում հավաքները պետք է հետաձգվեն կամ չեղարկվեն մինչև մարտ ամսվա վերջը: Կարևորություն ներկայացնող հավաքները պետք է սահմանափակվեն ոչ ավել, քան 250 անձով, մինչդեռ ավելի փոքր միջոցառումները կարող են տեղի ունենալ, եթե կազմակերպիչները կարող են ապահովել մասնակիցների միմյանցից 6 ոտնաչափ հեռու լինելու պայմանը:

Մենք արդեն սկսել ենք իրականացնել միմյանցից ֆիզիկապես հեռու գտվելու միջոցառումները կրթաշրջանի ամբողջ տարածքում՝ հետաձգելով այս շաբաթվա բաց դռների միջոցառումները (Open Houses) և առցանց ենք ցուցադրելու մեր Scholastic Bowl միջոցառումը այս երեկո՝ ունենալով առցանց հանդիսատես:

Գարնանային արձակուրդներին հաջորդիվ և մինչև ապրիլի կեսը Գլենդեյլի կրթաշրջանը հետաձգում է բոլոր միջոցառումներն ու գործողությունները, որ ընդգրկում են աշակերտների, մեծահասակների և համայնքի անդամների մեծ խմբեր, ներառյալ բաց դռների օրվա միջոցառումները, հավաքները և էքսկուրսիաները: Այս միջոցառումների այլընտրանքային տարբերակները, որոնք կսահմանափակվեն մարդկանց հետ մոտ շփումը, հնարավոր է իրականացնեն հավաքները բարձրախոսի հայտարարությունների միջոցով կամ առցանց (online): Կրթաշրջանի իրադարձություններին վերաբերող մանրամասները պարզ կլինեն մոտակա շաբաթների ընթացքում: Տնօրենները իրենց համայնքներին տեղեկություններ կտրամադրեն դպրոցական միջոցառումների վերաբերյալ: Մենք կվերագնահատենք իրավիճակը մոտակա շաբաթների ընթացքում և կորոշենք, թե արդյոք լրացուցիչ հետաձգումների կամ չեղարկումների անհրաժեշտություն կլինի:

Շնորհակալություն ենք հայտնում ձեզ ևս մեկ անգամ ձեր համբերատարության և հասկացողության համար, երբ մենք վերահսկում ենք այս արագ փոփոխվող իրավիճակը: Մենք միտված ենք ապահովելու Գլենդեյլի կրթաշրջանի մեր ամբողջ համայնքի առողջությունն ու անվտանգությունը: Մենք կշարունակենք համապատասխանեցնել մեր գործողությունները՝ հիմնվելով նահանգի և տեղական առողջապահության և կրթության ոլորտների պաշտոնյաների կողմից տրամադրված տեղեկությունների վրա, և կտրամադրենք ձեզ վերջին նորությունները հետագա օրերի և շաբաթների ընթացքում:

Հարգանքներով՝

Վիվյեն Էրքյան, Ed.D.
Դպրոցների գերատեսուչ